ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/44 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
5	Սեղանի համակարգիչներ	Սեղանի համակարգիչներ	Սեղանի համակարգիչներ	Սույն տեխնիկական բնութագիրը սահմանում է մատակարարման ենթակա գրասենյակային օգտագործման լրակազմ համակարգչի նվազագույն տեխնիկական, գործառութային, որակական և երաշխիքային պահանջները: Մատակարարվող լրակազմը պետք է ներառի՝ համակարգչային բլոկ,մոնիտոր,ստեղնաշար,մկնիկ, սնուցման և միացման համար անհրաժեշտ մալուխներ: Նվազագույն տեխնիկական պահանջներ Պրոցեսոր՝ առնվազն Intel Core i3-12100, 12-րդ սերունդ, կամ համարժեք արտադրողականությամբ պրոցեսոր: Միջուկներ / հոսքեր՝ ոչ պակաս, քան 4 միջուկ / 8 հոսք: Պրոցեսորի առավելագույն աշխատանքային հաճախականություն՝ ոչ պակաս, քան 4.30 GHz կամ համարժեք: Քեշ հիշողություն՝ ոչ պակաս, քան 12 MB: Գրաֆիկական

					համակարգ՝ ինտեգրված, առնվազն Intel UHD Graphics 730 կամ համարժեք: Օպերատիվ հիշողություն՝ ոչ պակաս, քան 8 GB DDR4 կամ DDR5: Տվյալների կրիչ՝ ոչ պակաս, քան 256 GB NVMe SSD կամ համարժեք արագագործ SSD: Ցանցային միացում՝ Gigabit LAN RJ-45: USB պորտեր՝ ոչ պակաս, քան 4 հատ: Տեսաելք՝ HDMI և/կամ DisplayPort՝ համատեղելի մատակարարվող մոնիտորի հետ: Մոնիտոր՝ Էկրանի անկյունագիծը՝ ոչ պակաս, քան 27 դյույմ: Էկրանի թույլատրելիությունը՝ ոչ պակաս, քան Full HD 1920 × 1080: Էկրանի կողմերի հարաբերակցությունը՝ 16:9: Մատրիցայի տեսակը՝ IPS կամ VA կամ համարժեք: Կոնտրաստը՝ ոչ պակաս, քան 1000:1: Պայծառությունը՝ ոչ պակաս, քան 250 cd/m²: Արձագանքման ժամանակը՝ ոչ ավելի, քան 8 ms GTG կամ ավելի լավ ցուցանիշ: Թարմացման հաճախականությունը՝ ոչ պակաս, քան 75 Hz: Միացման ինտերֆեյսներ՝ առնվազն HDMI և/կամ DisplayPort: Մոնիտորը պետք է ունենա սեղանային հենակ և լինի համատեղելի մատակարարվող համակարգչային բլոկի հետ: Գույն՝ Սև Պարտադիր պայման Մատակարարվող համակարգչային բլոկը, մոնիտորը, ստեղնաշարը և մկնիկը պետք է լինեն նույն արտադրողի (բրենդի) նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ :Համակարգչային բլոկը պետք է լինի արտադրողի կողմից գործարանային հավաքված ամբողջական համակարգիչ՝ արտադրողի պաշտոնական մոդելային շարքի շրջանակում, ոչ թե մատակարարի, խանութի կամ երրորդ անձի կողմից առանձին բաղադրիչներից հավաքված սարքավորում: Չի թույլատրվում

				մատակարարել անանուն սարքավորումներից կազմված լրակազմ, ինչպես նաև արտադրողի կողմից End of Life / End of Support կարգավիճակում գտնվող սարքավորումներ: Առաջարկվող համակարգչի և մոնիտորի տեխնիկական բնութագրերը և անհրաժեշտ ծրագրային ապահովումը պետք է հասանելի լինեն արտադրողի պաշտոնական կայքէջում: Երաշխիքային սպասարկումը՝ ոչ պակաս, քան 12 ամիս: Երաշխիքային ժամկետի ընթացքում մատակարարը պարտավոր է ապահովել սարքավորումների արտադրական կամ տեխնիկական թերությունների վերացումը կամ սարքավորման փոխարինումը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО КОМПГАРАНТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/44 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
5				